

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջև

ք. Երևան

02 ապրիլի 2019թ.

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է ՀՀ Ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի այսուհետ՝ (Հանձնաժողով) և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) միջև:

- ✓ **Հաշվի առնելով** հետհեղափոխական արդի փուլում մեր երկրի առջև ծառայած մարտահրավերներին դիմագրավելու համապատասխան մասնագիտական կարողությունների ձևավորման, ՀՀ օրենսդրության կատարելագործման և տնտեսագիտական միտքն իրական քաղաքական գործընթացների մեջ ներգրավելու անհրաժեշտությունը:
- ✓ **Համոզված լինելով**, որ գիտականորեն հիմնավորված օրենսդրական ակտերի ընդունումն անհրաժեշտ հիմքեր կստեղծի դրանց գործնական կիրառման արդյունավետության բարձրացման համար
- ✓ **Բարձր գնահատելով** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մասնագիտական ներուժը՝
- ✓ **Արժևորելով** գիտության ու պրակտիկայի միջև կապ հաստատելու և ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով կողմերի միջև արդյունավետ համագործակցությունը
- ✓ **Ճանաչելով** Հայաստանի պետական տնտեսագիտական համասարանին, որպես ՀՀ Ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի փորձագիտական և խորհրդատվական անկախ գործընկեր կառույց, կողմերը որոշեցին կնքել սույն Հուշագիրը՝ հետևյալի մասին

### Համագործակցության նպատակը և ուղղությունները

Սույն Հուշագրի նպատակն է ապահովել անհրաժեշտ համագործակցություն հայաստանյան տնտեսագիտական մտքի, փորձագիտական ներուժի և տնտեսական քաղաքականության մշակման պատասխանատուների միջև՝ նպաստելով ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով կողմերը մտադիր են օգտագործել ինտեգրացիոն, տնտեսական դիվանագիտության և քաղաքականության մշակման գործում ՀՀ Ազգային ժողովի Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովին օրենքով վերապահված դերակատարումը և գործնականում վեր ածել այն բանավեճի և երկխոսության յուրատեսակ հարթակի՝ տնտեսական և արտաքին տնտեսական քաղաքականության ոլորտի գիտական շրջանակների, փորձագիտական հանրության, քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչների և տնտեսական քաղաքականության մշակման պատասխանատուների միջև:

Նախատեսվում է համագործակցությունն իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- ԵԱՏՄ և տարածաշրջանային երկրների հետ միջազգային պայմանագրերի, միջազգային կարևորագույն նախագծերի իրականացմանն առնչվող ծրագրային փաստաթղթերի, օրենքների և դրանց նախագծերի համակողմանի վերլուծության իրականացում գիտականորեն հիմնավորված խորհրդատվական եզրակացությունների ներկայացման
- պատգամավորական թեմատիկ և հանրային լուսմների, սեմինարների, աշխատանքային քննարկումների և այլ գիտագործնական միջոցառումների համատեղ կազմակերպում:

Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքով հանձնաժողովի իրավասությանը վերապահված հարցերին կամ գործունեության ոլորտներին առնչվող իրավական ակտերի և փաստաթղթերի փորձագիտական, հետազոտական ուսումնասիրությունների, ըստ անհրաժեշտության կարող են ներգրավել նաև համալսարանի այլ ֆակուլտետների համապատասխան ամբիոնները կամ կառուցվածքային ստորաբաժանումները:

### **Համագործակցության պայմանները**

Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում հանձնաժողովն ապահովում է երկրի ինտեգրացիոն քաղաքականությանը վերաբերող հայեցակարգերի, ծրագրային փաստաթղթերի, օրենքների, օրենքների նախագծերի և դրանց կից փաստաթղթերի տրամադրումը Համալսարանին ապահովում է հանձնաժողովի նիստերին, պատգամավորական լուսմներին, աշխատանքային խորհրդակցություններին և այլ ձևաչափերով քննարկումներին Համալսարանի փորձագետների լիրաժեք մասնակցության համար անհրաժեշտ պայմաններ:

Համալսարանի ներկայացմամբ հանձնաժողովին կից գիտափորձագիտական խորհրդի (աշխատանքային խմբի) կազմում կարող են ընդգրկվել փորձագիտական ներուժ ունեցող մասնագետներ:

Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում փորձագիտական հետազոտություն կամ ոլորտային ուսումնասիրություններ իրականացնելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև Համալսարանը:

### **Հուշագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը**

Սույն Հուշագիրն ուժի մեջ մտնում է ստորագրման պահից:

Սույն Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

Հայաստանի Հանրապետության  
Ազգային ժողովի տարածաշրջանային  
և եվրասիական ինտեգրման  
հարցերի մշտական հանձնաժողով

Հայաստանի պետական  
տնտեսագիտական  
համալսարան ՊՈԱԿ

**Հանձնաժողովի նախագահ՝  
Միքայել Մելքունյան**

**Ռեկտոր՝  
Ռուբեն Հայրապետյան**

Ստորագրություն-----

Ստորագրություն-----